



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 464-Ա/2

«30» մարտի 2021 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ (ԿԱՄ)
ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՏԵՔՍՏԸ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20)-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման **Մրցույթ**:

Մրցույթին մասնակցելու Հայտը լրացվում և ներկայացվում է առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (<https://forms.gle/bqdevMxr3mvpW5Es9>)՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 23:59-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը տեղադրված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում (<http://scs.am/>):

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնից աշխատանքային օրերին՝ ժամը 14:00 - 17:00, հեռ.՝ 21-01-40 (119):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտության կոմիտե

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման նպատակով հայտերի (այսուհետ՝ Հայտ) ընտրության մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2021 թվականի մարտի 30-ի N 464-Ա/2 հրամանի:

1.2. Մրցույթի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղության շրջանակներում: Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման համար 12 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի գիտահետազոտական աշխատանք կատարող երեք երիտասարդ գիտնականներից կազմված խմբերին (այսուհետ՝ Խումբ): Հայտը ներկայացնում է Խմբի անդամներից մեկը (այսուհետ՝ Հայտատու), որի աշխատավայր հանդիսացող գիտական կազմակերպությանը կամ բարձրագույն ուսումնական հաստատությանն (այսուհետ՝ Կազմակերպություն) է պատկանելու ձեռք բերվող գիտական սարքը և (կամ) նյութը:

1.3. Համաֆինանսավորող կողմ կարող է հանդիսանալ Հայաստանի Հանրապետության այն կազմակերպությունը (իրավաբանական անձը), որը համաֆինանսավորումը կկատարի Հայաստանի Հանրապետության արտաբյուջետային

միջոցներից: Համաֆինանսավորող կողմ կարող է հանդիսանալ նաև օտարերկրյա կազմակերպությունը:

1.4. Մրցույթը չի նախատեսում ֆինանսական աջակցության տրամադրում համակարգչի և (կամ) գրասենյակային այլ պարագաների ձեռք բերման համար:

1.5. Ֆինանսական աջակցության առավելագույն չափը կազմում է 3.000.000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:

1.6. Մրցույթի համակարգումն իրականացվում է Նախարարի 2021 թվականի մարտի 12-ի N 05-Լ հրամանի համաձայն ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից:

1.7. Հայտը չի քննարկվում, եթե՝

-չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,

-չի բավարարում Մրցույթի հրավերի պայմաններին,

-Հայտատուի կողմից նախկինում իրականացված գիտական թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն,

-Հայտատուի կողմից ներկայացվել է Բիալի ցանկերում (Beall's list, <https://beallslist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն:

1.8. Գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերումից 12 ամիս հետո Կոմիտե է ներկայացվում ամփոփիչ Հաշվետվություն:

1.9. Հաշվետվությունը պետք է պարունակի տեղեկություններ՝ սարքի շահագործմանը մասնակցած Կազմակերպությունների և Իմբերի, ինչպես նաև իրականացված աշխատանքների ծավալի, բնույթի, ստացված արդյունքների (հրապարակումներ, գիտաժողովներ, նորարարական կարողության կիրառություն, մտավոր սեփականության տնօրինում և այլն) վերաբերյալ, որի հիման վրա Խորհուրդը տալիս է Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն:

2. Իմբին ներկայացվող պահանջները

2.1. Իմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ առնվազն մեկ տարի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում մշտապես բնակվող և գիտահետազոտական աշխատանք կատարող երիտասարդ

գիտնականներ, ում 36 տարին չպետք է լրացած լինի Մրցույթի Հայտերի ընդունման վերջնաժամկետի օրը:

2.2.Երեխա(ներ) ունեցող կին երիտասարդ գիտնականների պարագայում մինչև 36 տարեկանի տարիքային շեմը ենթակա է վերանայման՝ յուրաքանչյուր երեխայի համար ավելացնելով լրացուցիչ մեկ տարի, իսկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած տղամարդկանց համար՝ մինչև 38 տարեկան:

2.3.Խմբի անդամները չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.4.Հայտատուն պետք է առնվազն լինի ասպիրանտ կամ գիտաշխատող:

2.5.Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորման երաշխավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի աջակցության գիտական թեմաների կամ գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների ղեկավարները:

3. Կազմակերպությանը ներկայացվող պահանջները

3.1. Կազմակերպությունը, որին պատկանելու է ձեռք բերված գիտական սարքը և (կամ) նյութը, պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագիր:

3.2. Գիտական սարքերը և (կամ) նյութերը ձեռք են բերվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան, և ձեռք բերված սարքերի ու սարքավորումների տնօրինման իրավունքը պատկանում է Կազմակերպությանը՝ հետագայում ևս կանոնադրական նպատակներով օգտագործման (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

4. Հայտի լրացման և ներկայացման կարգը

4.1. Հայտատուն Հայտը լրացնում և ներկայացնում է առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (<https://forms.gle/bqdevMxr3mvpW5Es9>)՝ մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 23:59-ին):

4.2. Կոմիտե ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

-Հայտատուի դիմումը (Հավելված N 1),

-տեղեկություններ խմբի անդամների վերաբերյալ՝ հաստատված Կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և վավերացված կնիքով (Հավելված N 2),

-ֆինանսական նախահաշիվը (Հավելված N 3),

-համաֆինանսավորող կազմակերպության մասնակցության հիմնավորումը,

-տեղեկանք՝ հաստատված Կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և վավերացված կնիքով՝ առ այն, որ ձեռք բերված սարքը պատկանելու է Հայտատուի Կազմակերպությանը,

-խմբի բոլոր անդամների անձնագրի, սոցիալական քարտի պատճենները,

-գիտական սարքի և (կամ) նյութի նպատակահարմարության նկարագրությունը (մինչև 1 էջ),

-Հավելված N 2-ում խմբի անդամների կողմից նշված կոնֆերանսներին իրենց մասնակցությունը հիմնավորող փաստաթղթերի պատճենները, եթե կոնֆերանսների պաշտոնական կայքերում անձի մասնակցությունը հավաստող էջերի հղումները բացակայում են,

-վաճառող ընկերության կողմից ձեռք բերվող գիտական սարքի և (կամ) նյութի արժեքի վերաբերյալ տեղեկանք :

4.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում առձեռն 2021 թվականի մայիսի 3-ին կամ 4-ին՝ աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ):

5. Հայտերի գնահատման ընթացակարգ

5.1. Հայտերի գնահատումն իրականացվում է Խորհրդի կողմից:

5.2. Խորհուրդը Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո կազմակերպում է Հայտերի գնահատումը: Գնահատվում է գիտական սարքի և (կամ) նյութի կարևորությունը, խմբի գիտական ձեռքբերումները, ֆինանսական նախահաշիվը և համաֆինանսավորման առկայությունը:

5.3. Խորհուրդը Հայտերի գնահատման ընթացքում ծագած հարցերի պարզաբանման համար կարող է անցկացնել հարցազրույց, պահանջել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն:

5.4. Հայտերի գնահատումից հետո Խորհուրդը Կոմիտե է ներկայացնում իր կողմից հաստատված, Հայտերի վերջնական գնահատականների նվազման կարգով ձևավորված վարկանիշային ցանկը և շեմային գնահատականի առաջարկը:

5.5. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրին» պետական աջակցություն» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալներից, որոշում է շեմային գնահատականը, որից բարձր կամ դրան հավասար գնահատված Հայտերը երաշխավորվում են ֆինանսավորման: Նախարարը հաստատում է ֆինանսավորման երաշխավորված գիտական սարքերի և (կամ) նյութերի ցանկը, որում ներառված են Հայտատուների (այսուհետ՝ Շահառուներ), Կազմակերպության անվանումները, ինչպես նաև յուրաքանչյուր Հայտի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման չափը:

5.6. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Շահառուների ցանկը, յուրաքանչյուր հայտի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

5.7. Գիտական սարքի և (կամ) նյութի գնման անդորրագրի բնօրինակը հաշվետվության հետ միասին ներկայացվում է Կոմիտե:

6. Այլ դրույթներ

6.1. Կոմիտեի և Շահառուների միջև կնքվում է գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման նպատակով հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՅՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ

_____ից

(անուն հայրանուն ազգանուն)

(հասցե)

(հեռախոսահամար)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող ----- ծածկագրով հայտը՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման նպատակով հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝ _____

(անուն ազգանուն)

(ստորագրություն)

« ____ » _____ 2021 թ.

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման նպատակով հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), գրադեցրած պաշտոն	
6.	Ամբիոն/Լաբորատորիա/գիտական խումբ	
7.	Բնագավառը	
8.	Կրթությունը, որակավորումը (սովորելու տարիներ, ֆակուլտետ, բուհ)	
9.	Ասպիրանտուրա ընդունվելու / թեզը պաշտպանելու թվականը	
10.	Գիտական աստիճանը, կոչումը	
11.	Հոդվածների քանակը	
12.	Վերջին 5 տարում տպագրված թեզիսներ և հոդվածներ Հետևյալ ձևաչափով՝ Հեղինակ(ներ) (տարի) անվանում, ամսագիր, հատոր, էջեր, DOI էլեկտրոնային հղում (եթե առկա է)	
13.	Վերջին 5 տարում ստացած դրամաշնորհներ/թեմայի ղեկավարում/մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ Անուն ազգանուն, վերնագիր, ծածկագիր, դեր (ղեկավար/կատարող), էլեկտրոնային հղում, տարի, դրամաշնորհի ընդհանուր գումար, տևողություն (ամիս, տարի)	
14.	Վերջին 3 տարում կոնֆերանսների մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ տարի, կոնֆերանսի անվանում, երկիր, ժամկետ, պաշտոնական կայքէջի հղում, որտեղ երևում է մասնակցի անունը (այսպիսի կայքէջի բացակայության դեպքում անհրաժեշտ է կից ներկայացնել մասնակցությունը հաստատող փաստաթուղթ)	
15.	Վերապատրաստումներ Հետևյալ ձևաչափով՝ տարի, անվանում, գիտական կազմակերպություն, երկիր, տևողություն)	

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	

4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), զբաղեցրած պաշտոն	
6.	Ամբիոն/Լաբորատորիա/գիտական խումբ	
7.	Բնագավառը	
8.	Կրթությունը, որակավորումը (սովորելու տարիներ, ֆակուլտետ, բուհ)	
9.	Ասպիրանտուրա ընդունվելու / թեզը պաշտպանելու թվականը	
10.	Գիտական աստիճանը, կոչումը	
11.	Հոդվածների քանակը	
12.	Վերջին 5 տարում տպագրված թեզիսներ և հոդվածներ Հետևյալ ձևաչափով՝ Հեղինակ(ներ) (տարի) անվանում, ամսագիր, հատոր, էջեր, DOI էլեկտրոնային հղում (եթե առկա է)	
13.	Վերջին 5 տարում ստացած դրամաշնորհներ/թեմայի ղեկավարում/մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ Անուն ազգանուն, վերնագիր, ծածկագիր, դեր (ղեկավար/կատարող), էլեկտրոնային հղում, տարի, դրամաշնորհի ընդհանուր գումար, տևողություն (ամիս, տարի)	
14.	Վերջին 3 տարում կոնֆերանսների մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ տարի, կոնֆերանսի անվանում, երկիր, ժամկետ, պաշտոնական կայքէջի հղում, որտեղ երևում է մասնակցի անունը (այսպիսի կայքէջի բացակայության դեպքում անհրաժեշտ է կից ներկայացնել մասնակցությունը հաստատող փաստաթուղթ)	
15.	Վերապատրաստումներ Հետևյալ ձևաչափով՝ տարի, անվանում, գիտական կազմակերպություն, երկիր, տևողություն)	

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), զբաղեցրած պաշտոն	
6.	Ամբիոն/Լաբորատորիա/գիտական խումբ	
7.	Բնագավառը	
8.	Կրթությունը, որակավորումը (սովորելու տարիներ, ֆակուլտետ, բուհ)	
9.	Ասպիրանտուրա ընդունվելու/թեզը պաշտպանելու թվականը	

10.	Գիտական աստիճանը, կոչումը	
11.	Հոդվածների քանակը	
12.	Վերջին 5 տարում տպագրված թեզիսներ և հոդվածներ Հետևյալ ձևաչափով՝ Հեղինակ(ներ) (տարի) անվանում, ամսագիր, հատոր, էջեր, DOI էլեկտրոնային հղում (եթե առկա է)	
13.	Վերջին 5 տարում ստացած դրամաշնորհներ/թեմայի ղեկավարում/մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ Անուն ազգանուն, վերնագիր, ծածկագիր, դեր (ղեկավար/կատարող), էլեկտրոնային հղում, տարի, դրամաշնորհի ընդհանուր գումար, տևողություն (ամիս, տարի)	
14.	Վերջին 3 տարում կոնֆերանսների մասնակցություն Հետևյալ ձևաչափով՝ տարի, կոնֆերանսի անվանում, երկիր, ժամկետ, պաշտոնական կայքէջի հղում, որտեղ երևում է մասնակցի անունը (այսպիսի կայքէջի բացակայության դեպքում անհրաժեշտ է կից ներկայացնել մասնակցությունը հաստատող փաստաթուղթ)	
15.	Վերապատրաստումներ Հետևյալ ձևաչափով՝ տարի, անվանում, գիտական կազմակերպություն, երկիր, տևողություն)	

Հայտատու՝ _____
(անուն ազգանուն) (ստորագրություն)

Կազմակերպության
ղեկավար՝ _____
(անուն ազգանուն) (ստորագրություն)

«_____» _____ 2021 թ.

Կ. Տ.

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերման նպատակով հայտերի ընտրության մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ						
Հ/հ	Սարքավորման/նյութի անվանում	Միավոր	Միավորի արժեք (հազար դրամ)	Քանակ	Ընդամենը (հազար դրամ)	Հայցվող (հազար դրամ)
0	Օրինակի ձև	հատ	500	3	1500	1500
Սարքեր						
1					0	
2					0	
3					0	
4					0	
	Ընդամենը				0	0
Նյութեր						
5					0	
6					0	
7					0	
8					0	
9					0	
	Ընդամենը				0	0
	Ընդհանուր				0	0

Խմբի ղեկավար՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)